Հեռավոր Ամերիկա. Մի շրջանում,որտեղ բնակվում էր մի մարդասպան, ապրում նաեւ Մարլան իր ծնողների հետ: Նա մանկուց երազում էր դառնալ խուզարկու: Չնայած նրան, որ ծնողները կողմ չէին դրան՝ նա իր ծնունդին համոզել էր գնել մի պայուսակ, որում կային խուզարկության համար բոլոր հարմարանքները: Մարլան ապրում է Լոնդոնում: Ուրիշ քաղաք եւ առավել եւս երկիր նա գնացած չկար, եւ չէր էլ պլանավորում գնալ: Բայց մի օր Մարլայի մայրիկը լուրերի թողարկումից իմացավ, որ նրանց կողմերում բնակվում է մարդասպան, որի մասին հայտնի բաներ չկային, որոնցով մարդիկ կկարողանային ճանաչել եւ նախօրոք պաշտպանվել կամ էլ փախչել նրանից:
Մայրիկն ասաց, որ իրենց ընտանիքը պետք է մեկնի քաղաքից մի քանի օրով՝ հոր նոր աշխատանքով պայմանավորված: Մարլան իհարկե զարմացած էր, նա և ուրախ էր, և տխուր: Շա՛տ էր ուզում տեսնել ուրիշ քաղաքներ, իսկ նրան հազիվ էր այսպիսի հնարավորություն տրվել: Մյուս կողմից էլ բնօրրանը լքել չէր ուզում, առավել եւս, երբ Լոնդոնում հարցեր կային, որոնք պետք է լուծեր իսկական խուզարկուն: Նա փորձեց ամեն կերպ համոզել, որ չտեղափոխվեն: Սակայն նրա բառերն անիմաստ էին, եւ մայրը դրանք ասես չէր լսում: Մարլան շատ տխրեց եւ գնաց իր սենյակ, ինքն էլ չհասկացավ թե ոնց, բայց քնեց: Հանկարծ նա լսեց իրեն մի շատ հարազատ ձայն. Այո՛, դա հայրիկն էր: Նա կանչում էր ճաշելու: Մարլան, չնայած նեղվածությանը, գնաց. Նրանց ընտանիքում դեռ վաղ ժամանակներից ավանդույթ կար՝ ճաշել ամբողջ ընտանիքով: Բոլորը լուռ ուտում էին, լռությունը խախտվեց, եվ բոլորը լսեցին հայրիկի ձայնը.
-Իմիջիայլոց, ե՞րբ ենք մեկնում:
-Վաղը՝ վաղ առավոտյան,-ասաց մայրիկը,- Հա, քանի չեմ մոռացել, ես իմ ու քո իրերը դասավորել եմ ճամպրուկում արդեն: Մարլա, դու էլ հացդ կեր եւ գնա դասավորվելու:
Մարլան արագ կերավ, լվացրեց իր ափսեն, եւ գնաց իր սենյակ: Նա դրեց մի քանի շոր, եւ խուզարկության պայուսակը, որից նա դեռ ոչ մի անգամ չէր օգտվել, բայց պահում էր այն հույսով, որ ինչ-որ պահի պետք է գալու:
Ու այսպես Մարլան դասավորեց իր իրերը, որից հետո գնաց ու ասաց մորը.
-Մայրի՛կ, կարո՞ղ է դուք մեկնեք, իսկ ես մնամ այստեղ՝ Լոնդոնում:
Մայրիկը քմծիծաղեց եւ ասաց.
-Բա ո՞վ պետք է լուծի խոզանակի եւ ատամի մածուկի հարցը:
Մարլան քթի տակ ծիծաղեց եւ վեր կացավ ատամները լվալու:
Արդեն գիշեր էր, աղջիկը լվացվեց եւ պառկեց քնելու. Մարլան քնկոտ աղջիկ էր, դու նրան հնարավորություն տուր միայն և նա կքնի, իսկ արդեն որտեղ, երբ ու ոնց, նրան չի հետաքրքրում: Առավոտյան նա արթնացավ այն հույսով, որ նրանք թռիչքից ուշացել են: Բայց խառնված եւ խուճապի մատնված ծնողների փոխարեն տեսավ իրեն նայող, ժպտացող, ամբողջովին պատրաստ, օծանելիքի ամենաանուշ բույրն ունեցող մորը, որը պարզվում է մի քանի րոպե է արդեն, ինչ սպասում էր Մարլայի արթնանալուն:
-Մա՛մ, ժամը քանի՞սն է,- հարցրեց Մարլան:
-Հինգը Մարլա,վեր կաց, արագ պատրաստվիր, թե չէ կուշանանք,-պատասխանեց մայրը:
-Ավելի լավ է ուշանամ, քան այսքան շուտ վեր կենամ, մոթմոթաց Մարլան,-Անգամ մրջյունն իր աշխատասեր հալով հիմա յոթերորդ երազն է տեսնում:
-Լավ, դու գիտես: Վերջը Նյու Յորք ենք գնում,- ինքնավստահ ավելացրեց մայրը:
-Նյու Յո՞րք: Լա՛վ, վեր կացա,-պատասխանեց դուստրը:

Մայրիկը ժպտաց, եւ դուրս եկավ սենյակից։
Շուտով խոհանոցում մայրիկը տեսավ մի լրիվ ուրիշ Մարլայի՝ գեղեցիկ սանրվածքով եւ նոր հագուստով։ Հայրիկը զարմացած աչքերով նայում էր Մարլային, քանի որ նա քնաթաթախ չէր եւ չէր բողոքվում՝ «վաայ, հոգնած եմ», «քունս տանում է» կամ «վերջ, ես գնացի քնելու»։ Մարլան սիրում էր Նյու Յորքը եւ միշտ երազում էր այնտեղ լինել։ Մարլան, ի զարմանս հայրիկի, շատ առույգ եւ երջանիկ ձայնով ասաց.
-Բարի լույս։
Հայրիկը դեռ զարմացած, իսկ մայրիկը ծիծաղելով հոր զարմացած դեմքից՝ միաձայն ասացին.
-Բարի լույս, հազար բարի։
Մինչ հայրը դեռ փորձում էր հասկանալ, թե մեկ օր առաջվա իսկական Մարլան, որին նա սովոր էր տեսնել, ոնց դարձավ այսպիսի մի աղջիկ, մայրիկն ու Մարլան առանց ձայնի, լուռ նախաճաշում էին։ Հանկարծ ժամին նայելով՝ մայրիկը ճչաց.
-Ուշանում ենք։
-Մամ, մենք ամեն ինչով պատրաստ ենք,- ասաց Մարլան։
-Դուրս ենք գալիս թե չէ կուշանանք,- պաստախանեց մայրիկը։
Մայրիկին ոչ ոք չմերժեց, որովհետեւ իրենց ընտանիքի նշանաբանն է՝ ավելի լավ է շուտ հասնել, քան ուշանալ։ Եւ ընտանիքը դուրս եկավ։
Այնպես պատահեց, որ Մարլան, տնից դուրս գալուց հետո, մոռանալով զգուշացնել ծնողներին, մտավ խանութ։ Իսկ ծնողները մտածեցին, թե մեքենայի հետնամասում է նստած։ Այդպիսով նա մնաց միայնակ, ծնողները գնացին օդանավակայան առանց աղջկա։ Մարլան վազեց տուն ու գլխի ընկավ, որ միայնակ է։ Բայց շատ չմտահոգվեց, մտածելով՝ դե ես «Տանը միայնակ» ֆիլմը դիտել եմ, պետք է որ բան չլինի։
Ծնողները նույնպես հասկացան դստեր կորուստը, եւ մայրիկը խուճապահար ասաց.
-Մարլան չեկավ։
Պարզ է, որ արդեն «Տանը միայնակ» կինոյի հիմքով է պատմվածքը շարունակվում, բայց հայրիկն ասաց.
-Դու ուզում էիր, որ մենք երկուսով գնայինք՝ առանց երեխայի, հիմա էլ դժգոհում ես։
Մայրիկը գիտեր, որ դա ճիշտ էր, Մարլան էլ արդեն փոքրիկ չէր, մի քանի անգամ արդեն փորձ ունեցել էին Մարլային տանը միայնակ թողնելու. Նա անվախ աղջիկ էր։ Դրա համար ծնողները մի քիչ հանգստացան։
Հենց այդ օրը՝ խանութից տուն գնալիս, Մարլան մի տետր տեսավ, որտեղ գրված էր մի տարօրինակ բան՝ «Անծանոթի կողմից նամակագրությունը կփոխի տեղերով կանաչ ճանապարհն ու կապույտ երկինքը»։
Ինչքան էլ Մարլան խիզախ լիներ ու փորձություններ սիրեր՝ վախով դեն նետեց տետրը եւ շտապեց տուն։
Հեռախոսը ձեռքը վերցնելուն պես՝ Մարլային եկավ մի նամակագրություն անծանոթ համարից՝ «Դու գտա՞ր տետրը»։
Մարլան ահաբեկված զանգեց ծնողներին, որոնք արդեն մուշ-մուշ քնած էին ինքնաթիռում։ Մարլան հավաքեց իր միջի ամբողջ խիզախությունը եւ պատասխանեց նամակին՝ «Դու ո՞վ ես»։ Անմիջապես ստացավ պատասխանը՝ «Դու ինձ չգիտես, ես քեզ անծանոթ եմ։ Բայց այսօր 17:40 արի քաղաքի կենտրոն»։

Մարլան նամակը կարդաց, բայց ընդհանրապես չվախեցավ: Նա հավաքվեց եւ ասված ժամին գնաց կենտրոն: Այնտեղ նա տեսավ մի տատիկի, որն էլ ասաց Մարլային.
-Դու՞ ես Մարլա անունով այն աղջիկը, ով երազում է դառնալ խուզարկու:
-Այո, ես եմ: Որտեղի՞ց ինձ գիտեք,- ինքնավստահ պատասղանեց Մարլան:
-Ես էլ էի դրա մասին երազում եւ ուզում եմ քեզ օգնել այդ հարցում: Վերցրու այս գիրքը եւ ամպայման կարդա այն, հետեւիր հեռախոսիդ: Ես կգրեմ քեզ,- ասաց անծանոթ տատիկը, որը հետաքրքեց արդեն Մարլային:
Մարլան գլխով արեց եւ, հրաժեշտ տալով. գնաց տուն: Նա տուն հասնելուն պես բացեց գիրքը եւ սկսեց կարդալ: Դա հայտնի Ջոբ Մոունի «Ինչպես դառնալ խուզարկու» գիրքն էր: Մարլան կարդում էր այդ գիրքը անդադար, առանց շունչ քաշելու:
Բայց հետո նա տեաավ, որ հեռախոսին նամակ է եկել այն տատիկից ՝ «Գնա կողքի տնտեսական խանութն ու այդտեղից գնիր կռաթթվի սփրեյ»:
Ի՞նչ կռաթթվի մասին է խոսքը գնում՝ Մարլան էլ չգիտեր, բայց նա գնաց եւ գնեց այն: Քսուքի հետեւում գրված էր՝ չփչել աչքերին՝ առաջացնում է այրոց: Մարլան դա վերցրեց եւ դրեց սեղանին՝ շարունակելով գիրքը կարդալ: Հանկարծ դուռը թակեցին եւ Մարլան բացեց դուռը՝ չնայելով, թե դա ով էր: Մի անծանոթ էր դռան շեմին կանգնած
-Դուք ո՞վ եք,-հարցրեց Մարլան:
-Չճանաչեցի՞ր ինձ աղջնակ:
-Ոչ,- վստահ պատասխանեց աղջնակը:
-Ես Ջոբ Մոունն եմ.- ավելացրեց անծանոթը դռան շեմին կանգնած:
-Ես Ձեզ ավելի շատ նմանեցնում եմ հանցագործի կամ հենց մարդասպանի,-խիզախ պատասխանեց Մարլան և շարունակեց,- Ես իմացել եմ, որ խուզարկուն Դուք չեք, արհեստական բանականությամբ եք գրում այն ամենը, ինչի համար մարդիկ Ձեզ սիրում են, ես պարզել եմ դա մանրամասն ուսումնասիրելով գիքը, որն իբրև Ձեր հեղինակայինն է, այնտեղ բազմաթիվ վրիպումներ կարելի է գտնել, որ հուշում են՝ այստեղ աշխատել է արհեստական բանականությունը: Բայց հոգ չէ, ես պատրաստվել եմ նման դեպքերի համար...
«Ջոբ Մունը» ներխուժեց Մարլայի տուն: Աղջիկն անցավ իր մշակած պլան Բ –ին: Թույլ տվեց, որ «Ջոբ Մունը» իր հետևից հասնի խոհանոց, որտեղ և պահել էր աչքերի մրմուռ առաջացնող այն սփրեյը, որ անծանոթ տատիկն էր տվել: Փչեց հանցագործի աչքերին և պետք է տեսնեիք, թե ինչ արագությամբ ու թավալվելով տնից փախավ հանցագործը:
Պարզվում է՝ հենց ինքն էր մարդասպանը, որ հայտնվել էր քաղաքում: Երկար մտածված գործողություն էր. Սկզբում գիրք էր տպագրել ու մեծ քանակով վաճառել, որպեսզի հետախուզությամբ հետաքրքրվածների գործողությունները իր գրքի միջոցով կարողանար կառավարել ու նրանց արարքները դարձներ իր համար կանխատեսելի:
Անծանոթ տատիկը ևս բացահայտել էր այս գաղտնիքը, բայց ծեր էր ու չէր կարող մարդասպանի հախից գալ, իսկ ոստիկանությունը կկարծեր, որ նա խելագարվել է, եթե պատմեր այս ամենի մասին: Սա Մարլայի կյանքում մեծ դեր խաղաց: Հետագայում հայրն այլևս չընդդիմացավ դստեր՝ խուզարկու դառնալու ցանկությանը: Մարլան հասուն տարիքում կարողացավ նար գրել գիրք՝ «Ինչպես դսառնալ խուզարկու», բայց գրեց իր փորձից ելնելով:

Այժմ Մարլան հայտնի ու հմուտ խուզարկու է, ում քաջագործությունների մասին մենք դեռ երկար ենք լսելու։